| **Պայմանագրի կողմ** | **Պատվիրատու** |
|---|---|
| Արտակ Կայայի Մովսեսյան | ՀՀ քննչական կոմիտե |
| Անձ. AN0719919՝ տրվ. 046 կողմից | ՀՀ, ք.Երևան, Մամիկոնյանց 46/5 |
| Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արգել, 1-ին փող., 25-րդ շ., 35-րդ բն. | Բանկ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն |
| "Կոնվերս բանկ" ՓԲԸ | Հ/Հ 900011000834 |
| ՀՀ 1930004679880100 | ՀՎՀՀ 02631263 |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«04» «07» 2019 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_-_» «_-_» 2019թ.

Պայմանագրի համարը՝ N______-______

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_-_» «_-_» 2019թ. դուրս գրված N______-______հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Քանակական ցուցանիշը | | Կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Թիվ 13169919 քրեական գործով գեմոլոգիական փորձաքննություն | 19 հատ քարի գեմոլոգիական հետազոտություն | 1 | 1 | — | 04. 07. 2019թ. | 50,000 | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| **Ծառայությունը հանձնեց** | **Ծառայությունը ընդունեց** |
|---|---|
| Արտակ Կայայի Մովսեսյանը | ՀՀ ՔԿ Երևան քաղաքի վարչության Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ավագյանը |
| ստորագրություն | ստորագրություն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**ԱԿՏ N ______________**

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ քննչական կոմիտե (այսուհետ՝ Պատվիրատու) և Արտակ Կասյայի Մովսեսյանի (այսուհետ՝ Կատարող) միջև 2019թ. ______—______ «_—_»-ին կնքված N______—______ գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2019թ.___հուլիսի___«_04_»-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը (դրամ) | քանակը (փաստացի) |
| Թիվ 13169919 քրեական գործով գեմոլոգիական փորձաքննություն | 50000 | 1 |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

Արտակ Կասյայի Մովսեսյանը

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի վարչության Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ավագյանը

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

# ՈՐՈՇՈՒՄ
## փորձագետ ճանաչելու մասին

21 հունիսի 2019թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական՝ Գ.Հ.Ավագյանս, վերանայելով վարույթիս թիվ 13169919 քրեական գործի նյութերը,

## ՊԱՐԶԵՑԻ՝

2019 թվականի հունվարի 31-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է տվել Էդիտա Մելքոնի Գևորգյանն այն մասին, որ նույն օրը ժամը 12:10-ի սահմաններում, անհայտ անձը, Երևան քաղաքի Բյուզանդ 7-11 հասցեում գործող <<Կրեդիտ կորպ>> ՈՒՎԿ խոհանոցի սեղանի վրայից գաղտնի հափշտակել է իր <<Այֆոն>> մոդելի բջջային հեռախոսը՝ պատճառելով 300.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Հաղորդման առթիվ 2019թ փետրվարի 01-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում ՀՀ քր. օր-ի 177 հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ **13169919** քրեական գործը և նախաքննության կատարման համար ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

2019 թվականի փետրվարի 6-ին սույն քրեական գործով նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ, ընդունվել է վարույթ և կատարվում է նախաքննություն:

Բացի այդ, վարույթումս քննվող թիվ 13160619 քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2018 թվականի դեկտեմբերի 15-ին ժամը 18:20-ին ոստիկանության Կենտրոնական ՔՀԲ ծառայողները իրացնելով օպերատիվ տվյալները Երևան քաղաքի Խորենացի 24 հասցեում գործող <<Ոսկու աշխարհ>>-ից գողություն կատարելու կասկածանքով Կենտրոնական բաժին բերման են ենթարկել Արտաշես Անդրանիկի Մանուկյանին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Ա.Մանուկյանը 2018 թվականի դեկտեմբերի 15-ին ժամը 17:00-ի սահմաններում գողություն կատարելու նպատակով գնացել է Երևան քաղաքի Խորենացի 24 հասցեում գործող <<Զարտ>> ՍՊԸ, տաղավարի վրայից վերցրել է մեկ հատ ոսկյա-ադամանդյա քարերով մատանի, գցել բերանը, այնուհետև տաբատի գրպանը, սակայն նշված խանութի աշխատակիցը նկատել է, որ տաղավարի վրայից բացակայում է մատանին, հրավիրել է անվտանգության աշխատակիցներին, որի ժամանակ Ա.Մանուկյանը ներկայացրել է մատանի: <<Զարտ>> ՍՊԸ-ի տնօրեն Շամիրամ Հարությունյանը նշել է, որ մատանու շուկայական արժեքը 550.000 ՀՀ դրամ է , սակայն բողոք չի ներկայացնում:

2019 թվականի հունվարի 14-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 13160619 քրեական գործը և նախաքննության կատարման համար ուղարկվել է

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

2019 թվականի հունվարի 25-ին թիվ 13160919 քրեական գործով նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ, ընդունվել է վարույթ և կատարվել է նախաքննություն:

2019 թվականի փետրվարի 06-ին որոշում է կայացվել վարույթիս թիվ 13160619 քրեական գործը վարույթիս թիվ 13169919 քրեական գործին միացնելու և մեկ վարույթում նախաքննությունը շարունակելու մասին:

Դեռևս նյութերի նախապատրաստման ընթացքում 2018 թվականի դեկտեմբերի 19-ին նշանակվել է դատաապրանքագիտական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ի փորձագետներին:

Նախաքննության ընթացքում ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ից գրություն է ստացվել այն մասին, որ հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ում <<թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, միներալների, հանքային ապարների հետազոտություն>> ենթատեսակով համապատասխան փորձագետի /գեմոլոգ/ բացակայությունը, միջնորդել են փորձագետ ճանաչել և փորձաքննությանկատարմանը ներգրավել համապատասխան նեղ մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետի:

Վերոգրյալի կապակցությամբ գրություն է ուղարկվել ՀՀ քննչական կոմիտե՝ գեմոլոգ տրամադրելու խնդրանքով և ի պատասխան ներկայացվել է փորձագետ Արտակ Մովսեսյանը:

Նկատի ունենալով, որ նշված փորձաքննության կատարմանը անհրաժեշտ է ներգրավել թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի հետազոտություն իրականացնող մասնագետի /գեմոլոգ/, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55, 243-245-րդ 248-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1) Վարույթումս քննվող թիվ 13169919 քրեական գործով Արտակ Մովսեսյանին ճանաչել փորձագետ:

2) Փորձագետ Ա.Մովսեսյանին ներգրավել վարույթիս թիվ 13169919 քրեական գործով 19.12.2018թ. նշանակված դատաապրանքագիտական փորձաքննության կատարմանը:

*Ավագ քննիչ* *Գ.Հ.Ավագյան*